



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Շր. սարևական

Հասցի՝

Réd. du jour. „VERADZNOUTIOUN“ Roustchouk

Ред. на в. " ВЕРАДЗНУТЮНЪ " — Русе

ՌՈՒՍԱՀԱՅ ՆԱՑԻՕՆԱԼԻԶՄ

Կովկասում շարունակ երևան են գալիս նորանոր հայ յեղափոխական խմբեր։ Դրանցից ոմանք արգելն կրում են փայլուն անուններ։ Այդ չէ՛ խանգարում, որ ծրագրային տեսակետից նրանք լինեն բոլորովին ազգատիրական պետ, նրանք կամ բնու չունեն ծրագիր և կամ ունեն տարօրինակ խառնածքով՝ երբեմն նոյն իսկ սոցիալիստական, և առհասարակ դեմոկրատական ու նացիօնալիստական տարրերից։ Առաջնությունը, սակայն, պատկանում է այս վերջին տարրին, և այդքան էլ բաւական է, որպէսզի մեր հանդէպ տեսած լինենք իսկապէս այլ և այլ գիւմակների տակ ծածկւած նացիօնալիստական խմբեր։ Դէ՛հ, որքան էլ ընկան գտնենք դրանց երևոյթը կովկասում, չընորհով ուստական միապետութեան վերջին աւազակային յափըշտակութեան հայ հասարակութեան պատկանած սեփականութեան։ որքան էլ այդ գործից առաջացած հայ հասարակութեան նացիօնալիստական տրամադրութիւնը ներկայացնում լինի պարարտ հող այդ նացիօնալիստական ուղղութեան համար։ որքան էլ այդ տարրերն ըստ ինքեան հանդիսանում լինեն հակահաւաքական — բայց և այնպէս մենք կասենք, որ ի վերջոյ նրանց գերը լինելու է բացասական թէ՛ կովկասի ընդհանուր և թէ՛ մասնաւորապէս ուստայերի բուն ինտերէսների համար։

Ազգային խնդիրը ուստայերի համար գոյութիւն և իմաստ ունի այնչափ, որչափ նա ներկայանում է իբրև ազգային լեզուի, գայրոյների, մամուլի, որպէս և առհասարակ ժողովրդային իրաւունքների ու կուլտուրայի խնդիր։ Այդ խնդրի լուծման համար ուստայերս պէտք չունենք առաջացնելու սեպարատիզմի, զատման, հարց Ռուսաստանից և մէկ առանձին ինքնա-

վար տէրութիւն կողմնու ձեռն առնել, ինչպէս լուծում են ձայներ մեր նացիօնալիստական շարքերում։ Մենք պէտք չունենք նոյնպէս հարց առաջացնելու գաշտակցական, այսինքն Վեդեյուսի, կապի մասին մէկ ինքնուրոյն Ռուսահայաստանի կամ կովկասի ուստական տէրութեան հետ։ Ասում ենք, պէտք չունենք, որովհետև ըստ ինքեան սեպարատիզմը չէ յայտնում մի որոշիչ պայման հայ ժողովրդային իրաւունքների ու կուլտուրայի խնդրի լուծման, ինչպէս և ֆէդերատիվ գրութիւնը մի մասնաւոր և անհրաժեշտ պայման չէ հայ ժողովրդի ազգային ու կուլտուրական առաջադիմութեան։ Սեպարատիզմը, որպէս և ֆէդերատիվը յայտնում են, ամենաբաւ պարագային, միայն արտաքին կեղեւ, որ ըստ ինքեան խնդրի բուն արմատի հետ կապ չունեն։ Նրանք ուրիշ ոչինչ չեն հանդիսանում, եթէ ոչ մի պարզ շրջանակ գրած նկարի շուրջը, այդ բուն նկարը լինելով հայ ժողովրդային իրաւունքների և կուլտուրայի խնդիրը։ Արդարև, այդ սեպարատիզմը կամ ֆէդերատիվն ի՞նչ առաւելութիւն են բերում ուստայ ժողովրդի կուլտուրական զարգացման և իրաւունքների վաելման։ Ըստ ինքեան ներկայանում են արդեօք նրանք լուծող պայման այդ նպատակի համար։ Եւ կամ նրանք կարո՞ղ են արդեօք շոս ինքեան համարել և բաշխաւորութիւն, գարնտիա՝ իրաւունքների վաելման և կուլտուրական զարգացման հայ ժողովրդի վերաբերութեամբ։ Այո՛, եթէ ուստայերս գործ ունենայինք մէկ այնպիսի հասարակութեան հետ, որն ինքը կուլտուրական զարգացումով մեզնից ստոր է և կամ մեզ հետ միասին ձգտող չէ փրկելու իր հարազատ տէրութեան բռնակալ ընդմիջ։ Բայց ուստայ հասարակութեան նրկատմամբ մենք, ուստայերս, չենք կարող յաւակնութիւններ ունենալ այդ տեսակետից, քանի որ նա մեր առաջ ներկայանում է մի կենդանի, հշօր, երիտասարդ հասարակութիւն, ամեն

կերպ ձգտող դէպի ալատ ու մեծ ապագայ և կուլտուրապէս կանգնած քաղաքակիրթ հասարակութիւնների շարքը։ Ռուսաստանը թիւրքիա չէ և ո՛չ էլ ուստայ հասարակութիւնն իր կուլտուրայով թիւրք հասարակութիւնն, որն իր կուլտուրական, քաղաքական ու սոցիալական քաղաքայումով, իրա հետ տանում, քայքայում ու գահավիժում է կարստեան վիհը թիւրքահայերին ևս, որոնք կուլտուրայով թէ՛ բարձր են նրանից և թէ՛, հակառակ միւսի մեռելութեան, ներկայանում են ընդունայ ընթանալու առաջադիմութեան ու զարգացման ուղիով դէպի լաւ ապագայ։

Ռուսաստանում այսօր գոյութիւն ունեն յեղափոխական հշօր մարմիններ, մասնաւորապէս Ռուսաստանի Սօց. - Դէմ. կուսակցութիւնը, որի գործունէութիւնը և սոցիալ-քաղաքական ձգտումներն ամփոփում են այնպիսի պահանջներ, որոնք իրանց իրագործումով յայտնում են ո՛չ միայն ուստայ և Ռուսաստանի բոլոր ազգութիւնների, քաղաքքան ազատութեան և իրաւունքների, որպէս և ընդհանուր կուլտուրական զարգացման խնդրի լուծումը, այնպէս, ինչպէս ներկայումս այդ խնդիրը կարող է լուծում ստանալ, և դա՛ ընդարձակ իմաստով, որպէս ցոյց են տալիս մեզ նոյն Ռ. Սօց. - Դէմ. կ. - թեան Ծրագրի մօտակայ պահանջները։ Եւ դա այն պարզ, բայց և արմատական հիման վրայ, որ Ռուսաստանում բնակող բոլոր ազգութիւնների շահերը, թէ՛ քաղաքական և թէ՛ սոցիալ-տնտեսական, ընդունան են որպէս իրանց ներքին ամբողջական իմաստով, նոյնպէս և իրանց վերաբերութեամբ դէպի ցարիզմի բռնակալութիւնը։ Արդ, խնդրի բուն հողն այդ լինելով, ըստ ինքեան ակնյայտնի է, որ ամեն կցորդական, յաւելելով ձգտումներ այս կամ այն ազգի կողմից, այնպիսի ձգտումներ, որոնք ո՛չ մեկ էա՛նք բաժին չեն բերում խնդրի բաւարար, նպատակայարմար ու շուտափոյթ լուծման, կարող են կա-

տարել միայն բարեցոյցիչ, այլ և խանգարիչ դեր։ Այսպէս, սեպարատիզմի կամ ֆէդերատիզմի հարցն՝ առաջ գրած Ռուսաստանի այս կամ այն ազգութեան ծոցից՝ բնաւ մէկ օժանդակ ոյժ ու տարր չէ ներկայանում ցարիզմի ընդմիջ տապալելու գործունէութեան, այլ, ընդհակառակը, տակի խճճում, աւելի բարգոծում ու դժարացնում է այդ գործունէութեան առաջխաղացութիւնը և ինքն էլ, այսինքն սեպարատիզմի կամ ֆէդերատիզմի հարցը, ըստ ինքեան չէ յայտնում մէկ անհրաժեշտ պայման ուստայերի ազատման քաղաքական սորկութիւնից։ Աւելին ևս։ Որքան մենք անցնենք նացիօնալիստական հողի վրայ, որքան մենք ստեղծենք մի զուտ ու բացառապէս ուստայական ազգային դատ, որքան, այդպիսով, մենք մեր գաղութներն Ռուսաստանի միւս ժողովրդների և մասնաւորապէս ուստայ ժողովրդի դատից, որ, ի վերջոյ, կրկնում ենք հնաճախի շահերով կապած են միմեանց հետ, — այնքան մենք կանդամալուծենք ցարիզմի տապալման մեծ ու փրկարար գործը, այնքան մենք կառանձնանանք Ռուսաստանի յեղափոխական ընդհանուր բանակի շարքերից, այնքան էլ աւելի մեր ժողովրդին կը դնենք առանձնակի դիրքում ցարիզմի կառավարութեան առաջ, գլորելով նրան, ճակատ առ ճակատ, մէկ խիստ ու խիստ անհաւասար կուռում, թշնամու կրակի պէմ միակ ու գլխաբաց, անցօր և անպատենչ։ Այդ էլ խնդրի մէկ այլ կողմն է, որ ունի իր իրական ու գործնական արմատական նշանակութիւնը, որպէս և ուստայ ժողովրդի անպաշտպան մնալու ահաւոր վտանգը։

Այսպէս, նացիօնալիստական ձգտումներն ու յաւակնոտ գրութիւններն ամեն կերպ յայտնում են բացասական, այլ և վնասակար ուստայերի քաղաքական ազատութեան խնդրի լուծման նկատմամբ։ Բացասական, վնասակար — դա գեռ բոլորը չէ արտայայտում։ Ռուստայ նացիօ-

նախըզը յաւանակնութիւն ունի իրան ներկայացնելու յեղափոխական և առաջադիմական հոսանք, մինչդեռ իր էութեամբ նա րեակցիոններակն է, յետագիտական երևոյթ է: Եթէ ընդհանուր Ռուսաստանի ներկայ պատմական րօպէին ու քաղաքական ներկայ դրութեան միջոցին ռուսահայ նացիօնալիզմը յայտնուէր իբրև մէկ այնպիսի անհրաժեշտ պայման, առանց որի անկարելի է և կամ իսկ խիստ դժուարին է ձեռք բերել ռուսահայերի համար ժողովրդային իրաւունքներ և դնել նրանց կուլտուրական ազատ զարգացման ուղի վրայ, այդ դէպքում այդ նացիօնալիզմը կարող էր իրան կօչել յեղափոխական՝ յանուն առաջադիմութեան: Բայց այն դէպքում, երբ ցարիզմի տապալումով ձեռք է բերուած ռուսական վարական սահմանադրութիւն, իբրև զլիսաւոր ու հիմնական ազատ ռէժիմ ընդհանուր Ռուսաստանի և նրա բոլոր ժողովուրդների համար միանաւաստ կերպով և միաժամանակ համաձայն նրանց իւրաքանչիւրի ազգային մասնաւոր — լեզուի, լուսաւորութեան և առհասարակ ազգային կուլտուրայի — շահերի, այդ դէպքում ամեն կցորդական, յաւելեալ, ո՛ր էլ էակն հարցեր սէպարատիզմի կամ ֆէդէրատիզմի մասին, և կամ ամեն ձգտում զատ ազգային յեղափոխական գործունեութեան, բաժան և անկախ Ռուսաստանի միւս ազգերի յեղափոխական ընդհանուր կազմակերպութիւնից, կարող են միայն կատարել րէակցիօններական, յետագիտական դեր, ներկայանալ իբրև արգելաւորութիւն և հակադրեցիկ հոսանք քաղաքական յեղափոխութեան գործի աշոգութեան Ռուսաստանում:

Հայ նացիօնալիզմ Ռուսաստանում համանիչ է յետագիտութեան: Ռուսահայ նացիօնալիզմը առնչադէմ յեղափոխական հոսանք է, որքան էլ յեղափոխական ֆրազաբանութեամբ պարագլուխ լինեն մեր նացիօնալիստները: Նա ամենալու պարագային յայտնում է միայն ազգային գոգոհութեան արտայայտութիւն և ըմբոստութիւն: Ռուսահայ ժողովրդի ազատագրութեան և առաջադիմութեան գործում նրա պատմական դերն արգելաւորի է ու խաւարեցուցիչ:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Երա՛ սօցիալական և պետութեան ներքին քաղաքականութեամբ զբաղուելու անհրաժեշտութիւնը ոչ թէ մենք իդէօլօգիկներս զբաղինք և երկեցինք, այլ ամենից առաջ զբաղանք զբացայն դատակարար, որ անմիջական ծնունդըն էր օրեկար անտեսական կեանքի

զարգացման, որի կաշին անմիջական վտանգի էր ենթարկուած և որի գըլուխն՝ ըստ իւր էութեան՝ աւելի էր ազատ նախորդ իդէօլօգիկների քարոզած կանխակալ մտքերից և նախապաշարմաններից: Դա — բանւոր դասակարգն էր: Մի կողմից ան կապիտալիզմի այդ հակապական, սրնթաց առաջադիմութիւնը, միւս կողմից էլ Ռուսաստանի նոյն դասակարգի ինքնադիմակցութեան և յեղափոխականութեան ալիքներն էին, որ քաշեցին կովկասի մասնաւորապէս հայ բանւորութեան քաղաքական կուրդաշար: Եւ յիշուի իսկ բանւոր դասակարգն է, որ առաջին անգամ խորտակեց «ազգային» և խորթացնող ցանկապատը և իւր բանւորական ձեռնոցը չպտտեց ռուս կառավարութեան անամօթ բռնակալի երեսին: Ի պատիւ ամբողջ երկրի և ընդհանուր բանւորական դասակարգային պիտակցութեան՝ «անկուտուր» կովկասի երկրներ տակ նաեւ հնչեց բանւորի յեղափոխական փողը, ինչուստիական քաղաքներում աշխատող ձեռքերը — աշխատանքից կոշտացած և ուժասպառ, սակայն իրենց սեփական կուր համար նոր կարողութիւն և եւանդ ստանալով — բարձրացրին բանւորական կարմիր դրօշը՝ միութեան կողով: «Բոլոր երկրները (ազգերի) բանւորներ, միացէ՛ք...»: Այն ինչ ազգային իդէօլօգիկները՝ սկզբում խորխու ձայնով և ապա յուսահատական ճիշով բողոքում և կուռու էին այդ «անհօրմալ» երեւոյթի դէմ, «Պատակուտն սպգութեան մէջ! դասակարգային ստոր եսականութիւն», դաւաճանութիւն իրենց սեփական արեւակից եղբայրների դէմ այնտեղ՝ իսկական հայրենիքում! և նման մեղադրանքներ, զայրոյթ՝ մտածողութեան իդէալիստական եղանակից բղտող, այդպէս էր թելադրում նրանց «ազգային» տրամաբանութիւնը: Բայց իզուր!...

Սակայն ռուս միապետական անուանց կառավարութիւնը — որի ոտները տակի հողը արագութեամբ քանդուած է՝ իբրև կուլտուրայական աւելի բարձր մասերի յեղափոխութեամբ — կովկասի այդ «անկուր հիւրերն» աւելի զայրոյթով և վայրագաբար պիտի ընդունէր: Նա ինքը շատ և անուղւած է, որ և թէ — ինչպէս իբրև արեւակից Գերմանիայի սօցիալիստ թեթեւեղ մէջը — կովկասի նման յետ ընկած երկրում էլ բանւորական յեղափոխական շարժում է սկսել, իւր կեանքի ժամերը համարած են: Ինչդեռ զարգեցն էլ է բռնուած և ռուս կառավարութիւնը, նախ քան իւր կուռը՝ ցարիզմը՝ զերեզման ինքնուրու, աշխատում է միջոցներ որոնել, կարելոյն չափ յարատեւելու իւր անպէտք գոյութիւնը: Եթէ ուէ հոգեւոր պետի կովկասիական պայտի՝ մեռած մարմնի կարելի է արհեստական միջոցներով առժամապէս կենդանու-

*) Առաջին անգամ Դաշնակցականները (եթէ չստեմ պարզապէս Դաշնակցականներն) էին որ 2-3 տարի առաջ կովկասում հրապարակօրէն կուր էին մղում, հակապարօպազանդ անում սօցիալիզմ: Բանւորական շարժման դէմ համարելով այն անբնական և արհեստականօրէն առաջ բերւած մի հոսանք: Իսկ այսօր, յողթեամբ բնական և օրեկար անողորմելի գիտացքով՝ պոչները ծալած բոյներն են մըտել և ներքին տանջանքով խոստովանում են այդ շարժման բնականութիւնը: Ոմանք էլ, որպէսզի իրենց ընկերների կեղծ լատին, համարում են այն կեղծ «մի քանի տղեղ դէպքեր» (sic!)... դրան ժողովրդական բարբառով ասում են կարկատել:

թիւն տալ, ինչո՞ւ պիտի կարելի չըլինի մի հրէշաւոր մեխանիզմ՝ նոյնպէս պահպանել, որի տրամադրութեան տակ իսկ օտնուում են քաղաքային, բայց և ստոր միջոցներ: Այդ ամենաստոր միջոցներից ամենահանձարեղը ներքին գործերի նախարար Ֆոն Պլէվէի կուռքի վերածած քաղաքականութիւնն է: — ազգային ճնշում, ազգութիւնների կուր: Պէ՛տք է ճնշել ազգութիւններին, որպէսզի սրանք մտանան ընդհանուր պետական-քաղաքական և տնտեսական-սօցիալական ցաւերը և զբաղեն իրենց ազգային ինքրով: պէ՛տք է կուռացնել ազգութիւններն իրար դէմ, գրգռել ժողովրդի ստոր բնազդները, թշնամացնել իրար դէմ, որպէսզի նրանք իրար հակառակորդ ճանաչելով՝ չը միանան և կրկնապատկուած, ետպատկուած ու աւելի ուժեղ չկարողանան կուռ լինել դէմ, իսկական թշնամու և ազգային կուր նենդ հեղինակի դէմ: Եւ մարդասպան և սպառնալիք զգանալիս բարբ սկսում է իւր միտման բացարձակ և անսահման րուս կառավարութեան ազգակեր քաղաքականութեան պատմութեան մէջ շտեմնուած խառութեամբ ու ծաւալով: Մի տեղ՝ անագործին ջարդ (Կիւրիսեւ), մի ուրիշ տեղ՝ ազգային ինքնուրոյնութեան կըրճատումներ (Յիւրյանդիա), մի երրորդ տեղ՝ այլազգ համայնքի կարողութեան աւաղակաբար յափշտակում:...

Որպի էլ վայրենի և ստոր լինէր այդ քաղաքականութիւնը, այնուամենայնիւ նա ունեցաւ իւր կըրթիչ կողմը, այն, որ նա արթնացրեց ժողովրդի ազգային ինքն պիտակցութիւնը, միտքի միջոց հանեց ժողովուրդի հակազգութիւնը իւր իրաւունքների մասին, ինքը ապացուցեց իւր ճնշումը չաչափելի փաստով և վերջապէս տակուութեան, յեղափոխութեան (մանաւանդ որ երկրի ընդհանուր օղբ վարակուած է յեղափոխական բացիլինքով) սերմեր ցանց նրա մէջ և այդպիսով պատերազմի դաշտ հանեց: Պայդ է, որ ազգային այդ ճնշումը աւելի ևս պիտի գրգռէր ժողովրդի աւելի ճնշող ազգային շերտերին, որոնց համեմատաբար աւելի էր մօտ ազգային ճնշման կօնկրէմ դէպքը և որոնք աւելի էին շահագրգռւած նրանով: Կովկասահայերի վըրայ դրժնադրւած Պլեքիւն ճնշումը մօծ մասամբ, եթէ չստեմ բացառապէս, գրիպում էր հոգեւորականութեան, զիւղական ազգայնականութեան և թըւում հարուստ մանր բուժուաղիսյին՝): Իսկ քաղաքացի լատուր տարբը, որ իւր էութեամբ յեղափոխական է, լինելով թշնամի հասարակական և պետական արդի կազմակերպութեան մէջ տիրող դասակարգային ու անհաստական ճնշման՝ բնազդաբար, թեւալարութեամբ իւր սկզբունքի, պիտի լինէ և է թշնամի ազգային որ և է ճնշման:

Այսպէս ուրեմն կովկասի հայ հասարակութիւնը — իւր ամբողջութեամբ, իւր բոլոր շերտերով ու դասակարգերով — շահագրգռւած է կովկասի քաղաքականութեամբ, անբաւականութեան, խորաման մէջ է, այո՛, յեղափոխական շարժման ճանազարի վըրայ է: Այդ շերտերի հակապետական շարժումը նոր ծնած և զեռ իւր մանուկ հասակում լինելով՝ տակաւին իստեղծափոխութեան, քսօսի մէջ է նրանք՝ այդ շերտերը՝ իրերի ներքին զօրութեամբ, մօտիկ ապագայում պիտի գիծերենցիանան, օտար տարրերը իրարից բա-

*) Յօդուային սահմանները թոյլ են տալիս մեր այդ միտքը պարզելու և հաստատելու: Բաւականանում եմ միայն անխաբկելով:

ժանուելով, նմանը նմանի հետ միանալով՝ կազմակերպեն և իրենց յատուկ քաղաքական ծրարքով ապարդի ինչն են կուռակցութեամբ: Լինելով կովկասում երկու ընդհանուր անբաւականութիւն, շարժում՝ մի կողմից հասարակական — սօցիալական-րուսական, — մյուս կողմից էլ ազգային-իրաւական, կուռակցութիւններն էլ պիտի շրջեն այդ երկու կենտրոնի շուրջը, իրենց ստարաբոծիներով, այսինքն իրենց ձախակողմնան և սովորական թեւերով, արմատական և չափաւորական բաժիններով: Թէ է և ինքնիք իրարից զատուած:

Այժմ տեսնենք որո՞նք են այդ հասարակ, իրերի աջման քաղաքական արգանդից ծնունդ տանող կուռակցութիւնները ևս: Կրանցից որե՞ն կարող է յարել Դաշնակցութիւնը:

Բերին Ա. Կասեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԻՍ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա.—ԻՆ
Ն Ա Մ Ա Կ III.
Սիրելի ընկեր!
(Շար. նախորդ թիւէն և վերջ)

Իսկ այժմ, ռուս պետութիւնը գրիպտուտական նողկալի ձգտումներից կուռացած վերելիցի «Կուռակցութեան ժամանակի պատմական դերը» ինքն ուղղում է կատարել: Եւ չը զարմանա, եթէ ամեն այժմն աշխատում է վրացիների փոխարէն թեւքերին շոյել հայերի դէմ լարելու համար, չը զարմանա, որ ներկայումս Կովկասում թեւք պետական ծառայողների թիւը անհամեմատ աւելած է՝ քան հայերինը: Իսկ եղած հայերին էլ կամաց կամաց սկսել է անդամատել: Առնք մէկ կողմից՝ այս վերելի հանգամանքը մեզ աւելի նըպաստաւոր է, որ վերջապէս տիրանալ, ցարիզմի խոնարհ երկրպագու հայ-չինովներին էլ ինքնազիտացութեան վեմ իդէալին կարող է ձըգտել: Կառավարութեան հայերին վերաբերմամբ ունեցած, այսպէս ասած՝ վերելիցիան պիտի կանգնի ամենա սիրուն կերպով արտայայտեց ներքին գործոց նախարարի օգնական հայտեսաց Ծօն-Վալի այս արման Բագու զաւու ժամանակ, որ «Մահ հայերին» և «Յարին ու Հայրենիքին պաշտպանելու ընկերութիւն» կոչուող պրոկլամացիաներով ողողեցիպետի փողոցները: Բայց թէ այսուհետեւ ռուս պետութիւնը այնպէս պիտի կարողանայ վերելիցիայի նման իւր ցանած որոմնել և պտուղը ձալակել: Գոնէ չեմ կարծում, նրա կեղծ գոյնը արդէն բոլոր ազգերին էլ որոշ չափով յայտնի եղաւ:

Վերջերքս, սիրելի ընկեր! նըկատուում է, որ վերոյիշեալ «օտարակեր» թերթերը կարծես կամաց կամաց սկսել են երբեմն փայտած վըրացիներին էլ կծել: Այս բանը ամենից առաջ երեւեցաւ «Մոսկ. Վեց» թերթի «Հայ լեզու մամուլի ցննչութեան» վերջնական վերջնական յօդուածում: Թէեւ այդ վերջնական ինչպէս տեսնում են միմիայն հայ լեզու մամուլին է վերաբերում, բայց արի տես, որ համահասարակ կերպով յարձակվում են և վրացիական մամուլի և նոցա անհատաւորում հայ կամ վրացի ցննչութեան (զրաքննիչները) վըրայ: Այդ յօդուածագիրը մի քանի կովկաս տրամաբանական եզրակացութիւններից յետոյ, բացարձակապէս զրպարտում է թէ՛ ինչպէս հայ և վրացի լեզու մամուլում շատ անթոյլատրելի են ռուսական շահերին միանգամայն հակառակ, յեղափոխ. բնաբուութիւն կրող յօդուածներ և գրքեր են լոյս տեսնում: Այսպիսով — եզրակացում է բարեխիղճ յօդուածագիրը — այդ երկու ազգերի լեզու մամուլը բոլորովին զօրի է պարտաճանաչ գնչութեանը հակադրութիւնից: Եւ զս

չատ բնական է, քանի որ թէ վրացի թէ հայոց լեզուները գրաբնութիւնը էլի վրացի եւ հայեր են: Եւ որովհետեւ մեր գրական յօդուածագիրը չոր- ձակիում է սուսները վերայ, որ Մու- կուայի արեւելեան լեզուները կազար- եան ձեւարարում հրաշալի կերպով հայ եւ վրացի լեզուներն են անցնում, ինչո՞ւ համար չպէտք է նոյն լեզու- ները ստիպելու եւ սուսները, որ պէտքի հայ եւ վրացի գրաբնութիւնը ձեւաբից լինեն այդ պատարաստում: Ինչո՞ւ պա- տոնը: Գրանի որ կողմատու վրացի եւ հայոց լեզուները գրաբնութիւնը էլի հայեր եւ վրացիներ են քանի որ սուսները ձեւաբից չեն անցել այդ պա- տոնը — ասում է՝ պարսկեր — թէ կող- ինչ էլ որ էնի, միշտ սպասելի է, որ ամէն ինչ, «լոյսնաւոր» մտքեր եւ յօդ- ւածներ կը սպրդին նոյն լեզու մա- մուլում: Հարցնող ո՞վ, փնտրող ո՞վ: sic!

Որոշման թղթակիցը կարծում է որ գործնով Ամերիկեան գաւա: Եւ եր- րեւի կարծում է, որ «Գալիցիան եւ ընկ» քառ վարձկանները քնած են (եթէ մինչեւ անգամ) Նիկոլային հա- ւատարմի հայ եւ վրացի ցէնտրոնները դաւաճանեն սուս ամենաողորմած պե- տութեան): Եւ կարծում եմ, ընկեր! որ այդ զգուշիկ հրապարակածները ամենից լաւ գիտեն գոյութիւն ունե- ցող իրականութիւնը: Ինչո՞ւ չառ լաւ գիտեն վրացի եւ հայ լեզու մու- մուլի կապում եւ կաշկանդում վի- ճակը: ու այնուամենայնիւ, երազը խեղաթիւրում են եւ «լոյսնաւոր» գոյն ստիւն նրան: Զարմանալին այն է, որ հէնց միեւնոյն յօդուածագիրը մի- ւրեւի տեղում յիշում է, որ հայերէն եւ վրացիէն լեզուները սպասելիք թերթերի կամ գրքերի օրինակները ցէնտրոնները լինում անցնում է կա- ռավարչա պետի գրասենեակը, այնպէս որ, անգամ սուսները յետոյ («Մշա- կը» որ երկու ամսով դադարեց, հէնց այդ միեւնոյն կատարչապետի կան- ցիկարի գրաբնութիւնը գիտն է եղի, որովհետեւ եւրոպայի միջոցով, Չալ- խուշուանը «էլ շատե՞ք հայեր ինչ ա- նենք» վերնապրով նամակում, մի ինչ որ նախընտանիք բարեբոյրի բարեբոյր- ձութիւնն է գովաբանելու (եղև), մի գ. անգամ էլ Պետրոսովի ընդհա- նուր ազգերի, այսպէս սասն, վերա- հակել գրաբնութիւնի բերում է վը- նում: Մի թէ այդ 3 հրէշ քննիչները խոշորացոյց աչքերից յեղափոխական բնասութիւն կողմ խօսքերի ըստ- ւերն անգամ գտնել կարելի կը լինի:

Ինչ դարտ չը պատճառեց սուսաց թերթերի նուսնայոց կեղեցիցա- վանքապատկան կալուածների պատճա- րով ընդհանրապէս Պոլսի պատրիարքի եւ մասնաւորապէս Պարսկաստանի Ա- մերիկայի եւ երազայի, հայոց բողոք-

ները ընդգէմ ուս բունպետ միասնե- տութեան հրէշային քաղաքանութեան: Մի միայն սուսայի բողոքը — ասում է՝ «չը սուս, թերթերից մէկի Պոլսի թղթակիցը: — սուս պետութեան խա- ղաղութեան անպատկառ վրդովողները եւ նոցա եկեղեցական կալուածների միասնական բնական գրաբնութիւնը թաղոյն հաստատում հրամանները հա- կատակ գնացողները: Բանից դուրս է պալիս — շարունակում է նոյն թերթի թղթակիցը: — որ պատաս- ճանեան հայերն էլ արտօմակ ու- նին սուսաց ներքին գործերի մէջ մասն ու բաժին ունենալ, որ, Պոլսի Հայոց Պատրիարքը բողոքեց տեղի սուսաց գիտականութեան բարձրագոյն հաստատում Հայ-Գրիգորեանների կալուածների խմբում դէժ. բայց պ. Դեւ- պանը ցոյց տալով նոյն պատրիար- քին որ այդ միասնութիւնը իւր գործը չէ, այնուամենայն, Հայոց Պատ- րիարքը ուղղակի Պատրիարք է բողո- քել — որդէս թէ իրենց բողոքը հա- մաձայն փոխուի այդ օրէնքը»: Բայց մի թէ սուս պետութիւնը թող կը ստայ փոփոխել բարձրագոյն օրէնքը թող կը տայ փոփոխել մի օրէնք, որ հայերը անվերջ կերպով օգտուեն այդ հարուստ կալուածներից ու հէնց այդ միեւնոյն կալուածներով էլ սուս պե- տութեան շահերին հակառակ գործեն:

Բաւական է այսքան: Ծղրուելիս: Գեղ սերող ընկեր՝ Արար. Մովսէս. 31 Գեղտ. 1903

ԳԱՆՎՈՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԳՆՄ

Չնայած զարի բանակների կրամ պարտութիւնն ինչ Մայրա- գոյն Արեւելքում, այսօր Ռուսա- տանի ամէն կողմերում մաղթանք- ներ եւ փողոցային ցոյցեր են կա- տարում: Պարզ է թէ այդ ոգե- տարութիւնը բուն կերպով աւա- ջանում է, քանի որ ոտակաւոր- լիւնը ինքն է որ լծախոնք է կազմում եւ ստիպում անցորդնե- րին մասնակցել իրեն: Եւ ինչը եւ կատարում է կողմատու: Կատա- վարութիւնը վաղուց իվեր ցան- կանում է մի հայկական կատարած առաջացնել եւ աշխատում է առի- լիք բայ չիտանել:

*) Արքեպիսկոպոս Պետրոսովի հրամայ- ուեց Պոլսի սուսաց գիտականութեան, որ յայտնէ Հայոց Պատրիարքարանին թէ սուսային օրէնքները ստիպու- լի են (безповоротно):

Այդպիսի մի առիթ է ներ- կայանում վերաբարի 3-ին, երբ Բաղու միջոց հոգեւորականութեան ստիպում են մաղթանք կատարել: Այդ օրը հրամայեա՞ծ էր հայերին փակել իրենց խանութները:

Եկեղեցում պատարագը վեր- ջացնելուց յետոյ հոգեւորականու- լիւնը դուրս է գալիս եկեղեցու դէմը զանա՞ծ հրապարակի վրայ, որպէս լի բացող եւ մաղթանք կա- տարէ: Չնայած որ 3000-ի չափ հայեր խոնել էին՝ ստիպանու- լիւնը բացակայում էր եւ միայն մի քանի հարած ստիպաններ ու բալմաթիւ լրտեսներ կային: Մաղթանքից յետոյ երբ աշակեր- տական խումբն սկսեց նա ազել ռուսական ազգային կողմ, ա. դ. վարդիկանի կերպ ռուս վարձ- կանները ու մի քանի հասարա- կութեան մէջ, որին զո՞հ գնացող հայերից 5-ը մնաւ եւ 40- ի չափ վիր շարեցին: Միակի լծախոնք մոպոլուրդը, ցրեց, խանութները փակեցին եւ իսկոյն շարագործ- ներին ձերբակալեցին: Ժողովուր- զը զանկաջաւ լինչի օրէնքով պատել նրանց, բայց ստիկա- նութիւնը միջամտեց ասելով որ ինքը արժանի պատիժը կը տնօ- րինէ... մինչդեռ շարագործները այսօր յայտնում են իրեն ին- լազարներ...: Բաղու 4 փետր. 1904 Մալիկոն

Ծ Ա Յ Ր Ա Գ Ո Յ Ն Ա Ր Ե Ի Ե Լ Գ Ի Պ Ա Տ Ե Ր Ա Չ Ո Ր Ը

Մեր այն ընթերցողներուն համար, որ կարելիութիւն ունե- ցած են սուսագրութեամբ հետե- ւելու 1895-էն, մանաւանդ 1900- էն իվեր, Մայրագոյն Արեւելքի կէտքերու զարգացումին, ան- ակնկալ մը չը պիտի ըլլայ այն, ինչ որ տեղի կունենայ այժմ Բա- րեայի եկեղեցիներուն եւ սահման- ներուն վրայ՝ ճարտարագիտութեան եւ ռուսերու միջեւ: Եթէ 1895-ի Չին-ճարտական պատերազմէն յետոյ, կարելի էր միայն վերա- ցական ենթագրութիւններ ընել Մայրագոյն Արեւելքի մէջ այժմ

տեղի տնեցող զէպրեբու կարե- լիութեան մասին, 1900-ի կա- պիտալիստական եւ բողոքային եւ ապ- սօխի լիստական Ռուսիոյ Չինաս- տան կատարած «հօնականա ար- շատնքէն յետոյ, այս զէպրեբու ոչ թէ միայն լիստիկ կարելի գար- ձան, այլ եւ ճակատագրականա- պէս անխուսափելի:

Կապիտալիստական եւ բողոքային յոփշտակիչ լիստիկը, ապսօխի- լիստական Ռուսիոյ աշխարհա- կալական ձգտումները — ահա՞ զըլ- լիստային յանդարտները, որոնք ան- համաձայնութեան սրովը տարին Մայրագոյն Արեւելքի սրտը նե- տեցին կայծերը այն հրդեհին, որ այսօր արիւնոտ լրտով մը կը լրտասորէ Գեղին ծովու ա- փերը:

Պատմութիւնը մեզ առ լինէ: Պատմական իրողութիւններու լե- զուն այնքան պերճախօս է, որ նոյն իսկ վարկեան մը լուսովե- լու չենք սուսական զիպոմա- տիայի գաւազան նեղամտութե- նէն եւ երոպական կապիտալիս- տական մամուլի կաշառտու ձեւ- նածութեանէ:

Ահա այս իրողութիւնները: 1895-ի Չին-ճարտական պա- տերազմը փորձ մըն էր այս վեր- ջինին կողմէն բուն կերպով բա- նալու հին Չինաստանի դուները եւ բողոքական կապիտալիստիկ եւ կուլ- տուրայի աւել, ինչպէս որ 50 տարի առաջ «ճեւրակ սատանա- ներու» լիստիկանութիւնը նոյն կեր- պով ճարտի գունը բացին նոյն կապիտալիստիկ եւ կուլտուրայի աւ- ջեւ: Ինչպէս յայտնի է, ճարտ- նը յայտնու լաւ այս արիւնոտեցի պատերազմին մէջ: Հին ժաման- սած Չինաստանի չարատար լիւնը ճղմուեցաւ: Եւ երբ ճարտարագի- տը, իրենց յաղթանակովը գիտով- ցած, կը պատրաստուէին քաղե- լու իրենց ճիգերուն պատգնիքը, յանկարծ Ռուսաստանը բեմ՝ կաւ- իր ուսնահալիստիկ խաղաղու- լիւն պաշտպանիւ պերին մէջ: 1895 Ապրիլ 25-ին, Ռուս կառավարութիւնը հետեալ ծա- նուցադիրը ուղղեց ճարտական կառավարութեան: Ռուս. կայսե-

ԳՐԱՆԱՆՈՒՄ ԵՆԵԳԻՆԵՐ
(Մասիսիս Գործիքի)

Այգում, սենեակիս լուսամտով յետեւում, հակել լիւր ճիւղերի մէջ թուկոտում են ծիտերը եւ տալ-սաք խօսում իսկ հարեան տան ամենքի թեքաքքի վրայ նստած է յարգելի ազաւոր: Եւ լիով մտխարոյն թուկոտ- ների խօսակցութիւնը՝ նա հպարտա- թեամբ գլուխը շարժեց: Արեւի լու- լով ողորմած ջերմ օդը, ամեն մի- ձայն բերում է իմ սենեակը եւ եւ լսում եմ առաւել ոչ բարձր ձայնը: Լսում եմ տեղեւների մեղմիկ շուշուշը հասկանում եմ, թէ իմ լուսամտի չընանակի վրայ աղաւթները ինչի՞ մասին են գուրգուրանում խօսում: Եւ օդի հետ լցում է իմ սիրտը գար- նանի երաժշտութիւնը:

— Զըկ-չըբըկ, — գանալով ըն- կրներին ասում է ծիտը, — այս մենք նորից հասնաք գարնանը: Ծիտ չէ՞ արդեօք: Զըկ-չըբըկ: — Փաւաստ, փաւաստ — նազով երկարացնելով պարանոցը պատասխա- նում է ազաւոր: Եւ լսւ եմ ճանաչում այդ պատ- կառելի թուկոտներն, նա այլ կերպ չի խօսում: Ինչ կարճ եւ համոզելու- ցիլ մտքով: Բնականից լինելով յի- մար, նա, վախկոտ էլ է ինչպէս ազ- աւաների մեծ մարը: Եւ հասարակու- թեան մէջ ամենալաւ դիրքն ունի եւ ամէն մի ձեւով ծեր աղաւթներին հա-

մար մի ունէ բարեգործական բան է ստորում: Եւ ճանաչում եմ ծիտը, չը- նայած որ նա արտաքուստ թեթեա- միւս եւ նոյնիսկ աղատամիտ է երե- տում, սակայն իր գլխի այդ թուկոտի ինչպէս գլխին է: Եւ թուկոտում է ազաւոր մօտ արտաքուստ յարգանքով, սակայն սրտի խորքում յաւ է իմա- նում նրա գինը եւ երբեք չի խան- գարէ նրա, այնուս ժամին վերջիցի պատմութիւնները ասել:

Իսկ չընանակի վրայ ջանել պըճ- նոպարը աղաւթին տաք կերպով հա- մոզում է հեղիկ էք-աղաւթնում «նա կը մեռնի, կը մեռնի հիստիստի- մէջ, եթէ դու եւս ցոյց չըտես սէր՝ նը- ման իմ սիրտը»:

— Իսկ գիտե՞ք տիրուհի, գեղձանիկ- ները թուսն եկան, հարստութեւն է ծիտը: — Փաւաստ:

Եկան ու աղմուկում են, ոտատուում, ձուտղում: Սաստիկ անմանցիտ թը- շուտներ են: Սարեակներն էլ եկան նրանց յետեւից... Ինչպէս միշտ, հա- հա-հա: Երեկ, գիտե՞ք, եւ նրանցից մէկին կատակաբար հորցրել: «Ի՞նչ է սիրելիս, կ'ըսե՞ք»: Պատասխանեց յոնկոտին: Այդ թուկոտները ամենե- լին չեն յարգում խօսակցի ստորձա- նը, կոչւածը հասարակական դիրքը: Եւ պարտական ծիտ եմ...:

Բայց այստեղ ծիտերը չեն անկի- նից տանիքի վրայ երեւաց յանկարծ ջանել ազաւորը եւ կ'առաջին ասաց, — ոչապրութեամբ ականջ դնելով հա- մաձայն ծառայութեան պարտակա-

նութեան՝ օդի շրի եւ երկրի խորքե- րում բնակող արարածների բոլոր խօ- սակցութիւններին եւ անայնպէս հե- տեւելով նրանց վարքին, պատիւ ու- նիմ ծանուցանելու, որ յիւեալ գեղ- ձանիկները ամեն ինչի մասին բարձր ճառողում են եւ նամբաձակում են յուսալ, իբր թէ, բնութեան մօտա- լուս վերանորոգութեան վրայ»:

— Զըկ-չըբըկ, բացակայեց ծի- տը անմանցապատմութեամբ յետ նայելով լրատուի վրայ:

Իսկ ազաւոր բարեաց սկսում է թեամբ գլուխը շարժեց: — Արքեպիսկոպոս է, դա առա- ջին անգամ չէ, որ լինում է, ասաց ծիտը: Իսկ ամբողջ բնութեան վե- րանորոգութեան մասին, դա... ինչու- կէ ցանկալի է... Եթէ դուրս գայ այն ոչտերի թայտութիւնից, որոնց որ վեր սրբութեւն է այդ անկը: — Փաւաստ, — ասաց ազաւոր, — սուսաց յայտը, խօսակցի վրայ բարեաց սկսած հայեացք ձգելով:

— Վերոյիշեալին պետք է կցեմ, — շարունակեց ազաւոր, — որ յիշուլ գեղձանիկները անբաւականութիւն ցոյց տան այն պատճառով, որ այն առաւելները, որոնցից նրանք իրենց ծարաւն են յագեցնում, իբր թէ, պըղ- տոր են, նրանցից մի քանիսը նոյն- իսկ համարձակում են աղատութեան մասին երազել...:

— Ա՛հ, նրանք միշտ այդպէս են, — բացակայեց ծիտը ծիտը, — դա նը- րանց ջանելութիւնից է, դա բոլոր-

վին վտանգաւոր չէ: Եւ էլ ջանել եմ եղիլ եւ նոյնպէս իրազել նրա... մա- սին: Հասկանալի է, համեստ է ի ե- րազում... Սակայն յետոյ դա անցաւ Երեւան եկաւ ուրիշը, նա աւելի իրական (բեռ) էր... հա-հա-հա... Եւ, գիտե՞ք, ասելի արտօմիկ, ա- լելի անընթեղա ծտերի համար... հա- հա...:

— Ե-չըմ լուեց աղու կուլոտը: Մայրի տեղեւների վրայ երեւաց իս- կական քաղաքացիական ժողովութեակը (անիգիր), նա ողորմապէս բարեւոյց թուկոտների հետ ու ասաց:

— Ե՛ պարտաներ, դուրս գլուխ էք, օդի մէջ ինչ որ բանի հոտ է գալիս, է՛:

— Գարնանային օդ է, ձերգ- թիւն, — ասաց ծիտը:

Իսկ ազաւոր միայն պղտը թե- քեց դէպի կողքը եւ կուլուց մեղմ ձայնով նման ոչխարի մայրցին:

— Իէ, այո՞... երեկ վիտայի (թղ- թխալ) ծամանալի վրայ ասաց նոյնպէս մի սոնմական պատուար շահէն՝ ինչ որ բանի հոտ է գալիս... Իսկ եւ պա- տասխանի տեսնեք, հոտ քաշեմք, քնեմք: Պատճառաւորապէս:

— Ծիտը այդ պէս է, ձերգ-թիւն: — Կատարելապէս պատմատարան- ւած է, համաձայնեց ծիտը: Միշտ, ձերգ-թիւն, պէտք է սպասել: Պատ- ւաւոր թուկոտը միշտ կը սպասէ:

Թարգ. Անիկոնան (Շարունակելի)

